ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

31.01.2023թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Տ.Հովսեփյանը- մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը- մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ա.Ալոյանը- մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Մատինյանը, Դ.Մանուչարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Ադլոյանը, Է.Հախվերդյանը, Ա.Սահակյանը, Ա.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ի.Մարտիրոսյանը, Ա.Գասպարյանը
Տ.Խաչատրյանը- մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

(զեկ. մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա/ Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության կանոնների պահպանման նկատմամբ:

բ/ Մինչև 03.02.2023թ. ներկայացնել քաղծառայության վերապատրաստման ենթակա աշխատակիցների թեկնածուների ցանկը:

գ/ Առավելագույնս ուշադրություն ցուցաբերել զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքների անդամների կողմից դիմումների ու դիմումատուների ընդունելությանը, արագ արձագանքել բարձրացված խնդիրներին և դրանց լուծմանը՝ բացառելով ցանկացած դժգոհություն և հարցերին տալ իրավական ու օրինական լուծումներ:

դ/ Մարզպետի կողմից տրված ցանկացած բանավոր հանձնարարականի վերաբերյալ ներկայացնել հիմնավորված տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում, նաև՝ գրավոր:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի ճանապարհների սպասարկման և շահագործման աշխատանքների իրականացման նկատմամբ:

31/01/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99